

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B

**ԽՈՐՀՐԴԻ 1991 թվականի հուլիսի 15-ի՝ երրորդ երկրներից Համայնք բերվող կենդանիների անասնաբուժական ստուգումների կազմակերպումը կարգավորող սկզբունքներ սահմանող եւ 89/662/ԵՏՀ, 90/425/ԵՏՀ ու 90/675/ԵՏՀ**

**հրահանգները փոփոխող ՀՐԱՀԱՆԳ**

*(91/496/ԵՏՀ)*

*(ՊՏ L 268, 24.09.1991թ., էջ 56)*

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր-{}-		
		Թիվ	էջ	ամսաթիվ
M1	Խորհրդի 1991 թվականի նոյեմբերի 19-ի L 340 91/628/ԵՏՀ հրահանգով		17	11.12.1991
◻M3	Խորհրդի 1992 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ L 243		27	25.08.1992
"M4	Խորհրդի 1996 թվականի հունիսի 26-ի 96/43/ԵՀ L 162 հրահանգով		1	01.07.1996
M5	Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի L 363 2006/104/ԵՀ հրահանգով		352	20.12.2006
►M6	Խորհրդի 2008 թվականի հուլիսի 15-ի L 219 2008/73/ԵՀ հրահանգով՝ Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ		40	14.08.2008

Փոփոխված՝

A1 C 241 21 29.08.1994

«Ավստրիայի, Շվեդիայի եւ Ֆինլանդիայի  
անդամակցության մասին» ակտով

(լրամշակված՝ Խորհրդի 95/1/ԵՀ որոշմամբ, L 001 1 ..  
Եվրատոմ, ԱՊԵՀ)

ⓂA2 L 236 33 23.9.2003

Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի  
Հանրապետության, Կիպրոսի  
Հանրապետության, Լատվիայի  
Հանրապետության, Լիտվայի  
Հանրապետության, Հունգարիայի  
Հանրապետության, Մալթայի  
Հանրապետության, Լեհաստանի  
Հանրապետության, Սլովենիայի  
Հանրապետության ու Սլովակիայի  
Հանրապետության անդամակցության  
պայմանների եւ Եվրոպական Միության  
հիմնադրման մասին պայմանագրերին  
համապատասխան կատարվող  
կարգավորումների մասին ակտերով

Ուղղված՝

"C1

Ուղղում՝ ՊՏ L 141, 31.05.2008 թ., էջ 22 (91/496)

▼B

**ԽՈՐՀՐԴԻ 1991 թվականի հուլիսի 15-ի՝ երրորդ երկրներից Համայնք բերվող կենդանիների անասնաբուժական ստուգումների կազմակերպումը կարգավորող սկզբունքներ սահմանող եւ 89/662/ԵՏՀ, 90/425/ԵՏՀ ու 90/675/ԵՏՀ հրահանգները փոփոխող ՀՐԱՀԱՆԳ**

(91/496/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 43-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը<sup>1</sup>,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը<sup>2</sup>,

քանի որ կենդանի կենդանիները ներառված են Պայմանագրի II հավելվածի ցանկում.

քանի որ Համայնքի մակարդակով երրորդ երկրներից բերվող կենդանիների նկատմամբ անասնաբուժական ստուգումների մասին սկզբունքների սահմանումն օգնում է պաշտպանելու մատակարարումները եւ ապահովելու շուկայի կայունությունը՝ միեւնոյն ժամանակ ներդաշնակեցնելով կենդանիների առողջության պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցները,

քանի որ Խորհրդի «Ներքին շուկայի ձեւավորման գործընթացի ավարտի նպատակով որոշ կենդանի կենդանիների եւ արտադրանքի միջհամայնքային առետրի համար կիրառելի անասնաբուժական ու զոոտեխնիկական ստուգումների մասին» 1990 թվականի հունիսի 26-ի 90/425/ԵՏՀ հրահանգի<sup>3</sup> 23-րդ հոդվածով, մասնավորապես, ամրագրված է, որ

<sup>1</sup>ՊՏ թիվ C 89, 06.04.1991թ., էջ 5:

<sup>2</sup>ՊՏ թիվ C 183, 15.07.1991թ.:

<sup>3</sup>ՊՏ թիվ L 224, 18.08.1990 թ., էջ 29: 91/174/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 85, 05.04.1991թ., էջ 37):

Խորհուրդը նշված հրահանգով կարգավորվող կենդանիների երրորդ երկրներից ներկրման նկատմամբ ստուգումների կիրառելի կանոններ եւ ընդհանուր սկզբունքներ պետք է սահմանի,

քանի որ երրորդ երկրներից բերված կենդանիների յուրաքանչյուր խմբաքանակ պետք է անցնի փաստաթղթային եւ նույնականացման ստուգումներ, երբ այն ներս է բերվում Համայնքի տարածք,

քանի որ պետք է Համայնքի ամբողջ տարածքում վավեր սկզբունքներ սահմանվեն՝ փաստացի ստուգումների կազմակերպման եւ հետագա հսկողության համար, որոնք պետք իրականացվեն անասնաբուժության ոլորտի իրավասու մարմինների կողմից,

քանի որ դրույթ պետք է սահմանվի երաշխիքային պայմանավորվածությունների համար. քանի որ այս համատեքստում Հանձնաժողովը պետք է կարողանա գործողություններ ձեռնարկել, մասնավորապես՝ համապատասխան վայրեր այցելություններ կատարելու եւ ըստ հանգամանքների միջոցներ ընդունելով,

քանի որ հսկողության համակարգի սահուն աշխատանքի ապահովման համար պետք է առկա լինի հավաստման ընթացակարգ եւ սահմանային հսկիչ կետերի նկատմամբ պետք է հսկողություն իրականացվի եւ պետք է իրականացվի երրորդ երկրներից ներկրվող կենդանի կենդանիների նկատմամբ ստուգումներ իրականացնելու համար պատասխանատու իրավասու աշխատակիցների փոխանակում,

քանի որ Համայնքի մակարդակով ընդհանուր սկզբունքների սահմանումն ավելի կարելի է՝ հաշվի առնելով, որ ներքին շուկայի ձեւավորման գործընթացի հեռանկարային ավարտի հետ միասին ներքին սահմանային անցակետերը պետք է վերանան,

քանի որ 89/662/ԵՏՀ<sup>4</sup>, 90/425/ԵՏՀ եւ 90/675/ԵՏՀ հրահանգները պետք է փոփոխվեն՝ սույն Հրահանգին համապատասխանեցվելու նպատակով,

քանի որ սահմանափակ տեւողությամբ որոշ անցումային միջոցների ձեռնարկումն անհրաժեշտ է համարվում սույն Հրահանգով հսկողության նոր պայմանավորվածություններին անցումը դյուրացնելու նպատակով,

քանի որ սույն Հրահանգի կիրառության համար միջոցների ընդունումը պետք է վերապահվի Հանձնաժողովին,

<sup>4</sup>ՊՏ թիվ L 395, 30.12.1989թ., էջ 13:

### Հոդված 1

1. Երրորդ երկրներից Համայնք բերվող կենդանիների նկատմամբ անասնաբուժական ստուգումներն իրականացվում են անդամ պետությունների կողմից՝ համաձայն սույն Հրահանգի:
2. Սույն Հրահանգը կիրառվում ոչ առետրային նպատակներով ուղեւորների մոտ գտնվող ընտանի կենդանիների անասնաբուժական ստուգումների նկատմամբ՝ բացի ձիազգի կենդանիներից:

### Հոդված 2

1. Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են 90/425/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածում ներառված սահմանումները:

#### 2 Բացի դրանից՝

- ա) «փաստաթղթային ստուգում» նշանակում է կենդանուն կամ անասնաբուժական վկայագրերին կից այլ փաստաթղթերի ստուգում.
- բ) «նույնականության ստուգում» նշանակում է փաստաթղթերի կամ վկայագրերի եւ կենդանիների համապատասխանության ստուգում միայն տեսանելի միջոցներով, ինչպես նաեւ կենդանիների վրա պարտադիր դրվող դրոշմների առկայության եւ դրանց համապատասխանության ստուգում.
- գ) «փաստացի ստուգում» նշանակում է կենդանու փաստացի ստուգում, հնարավոր է նմուշառում եւ լաբորատոր փորձաստուգում եւ, հարկ եղած դեպքում՝ կարանտինի դեպքում լրացուցիչ ստուգումներ.
- դ) «ներկրող» նշանակում է որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը ներկրման նպատակով կենդանիներ է ներկայացնում Համայնքի տարածք.

- ե) «Խմբաքանակ» նշանակում է նույն տեսակի, նույն անասնաբուժական վկայագրով կամ փաստաթղթով կարգավորվող, նույն փոխադրամիջոցով ուղարկվող, միեւնույն երրորդ երկրից կամ նման երկրի նույն տարածաշրջանից առաքվող կենդանիների թիվը.
- զ) «սահմանային հսկողության անցակետ» նշանակում է Խորհրդի՝ երրորդ երկրներից Համայնք մուտք գործող արտադրանքի անասնաբուժական հսկողության կազմակերպումը կարգավորող սկզբունքներ սահմանող 1990 թվականի դեկտեմբերի 10-ի 90/675/ԵՏՀ հրահանգի<sup>5</sup> հավելվածում նշված տարածքներից մեկի արտաքին սահմանի անմիջական հարեանությամբ տեղակայված հսկողության կետ, որը նշանակված է այդ նպատակով եւ հաստատված է 6-րդ հոդվածի համաձայն:

## **ԳԼՈՒԽ I**

### **Ստուգումների կազմակերպումը եւ դրանց հաջորդող միջոցառումները**

#### **Հոդված 3**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ՝

- ա) ներկրողները պարտավորություն ունենան մեկ աշխատանքային օր առաջ ծանուցում ուղարկել կենդանիներին ներկայացնելու սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական անձնակազմին՝ նշելով կենդանիների թիվը, տեսակը եւ ժամանման պլանավորված ժամանակը.
- բ) կենդանիները պաշտոնական հսկողության տակ անմիջականորեն ուղարկվեն 6-րդ հոդվածում նշված սահմանային հսկողության անցակետ եւ, եթե անհրաժեշտ է՝ կարանտինի կենտրոն, ինչպես սահմանված է 10 (1) հոդվածի առաջին ենթապարբերության երկրորդ պարբերությամբ.
- գ) կենդանիները չտեղափոխվեն նման անցակետից կամ կենտրոնից մինչեւ ապացույցներ տրամադրվելը՝ չսահմանափակելով 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն ընդունված հատուկ դրույթների գործողությունը.
- ի) 7 (1) հոդվածի երկրորդ պարբերությամբ կամ 8-րդ հոդվածում սահմանված վկայագրի ձեւով այն մասին, որ այդ կենդանիների նկատմամբ անցկացված է իրավասու մարմնի պահանջները

<sup>5</sup>ՊՏ թիվ L 373, 31.12.1990թ., էջ 1:

բավարարող անասնաբուժական հսկողություն՝ 4 (1) եւ (2) (ա), (բ) ու (դ) հոդվածի եւ 8-րդ ու 9-րդ հոդվածների համաձայն.

ii) որ անասնաբուժական հսկողության համար վճարված է եւ, հարկ եղած դեպքում, 10 (1) հոդվածի երկրորդ եւ երրորդ պարբերություններում, 10 (6) հոդվածում եւ 12 (2) հոդվածում սահմանված ծախսերի համար դեպոզիտ է կատարվել.

դ) մաքսային մարմինը չարտոնագրի 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում նշված տարածքներում ազատ շրջանառության համար ռեժիմով բացթողում՝ մինչեւ ապացույցներ տրամադրելն այն մասին, որ (գ) կետում նշված պահանջները կատարված են՝ չսահմանափակելով 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն ընդունված հատուկ դրույթների գործողությունը:

2. Անհրաժեշտության դեպքում, պետք է ընդունվեն սույն հոդվածը կիրարկելու համար մանրամասն կանոններ՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

#### **Հոդված 4**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ անկախ կենդանիների անցման մաքսային նպատակակետից, երրորդ երկրներից ներկրվող կենդանիների բոլոր խմբաքանակները անասնաբուժության գծով մարմնի կողմից ենթարկվեն փաստաթղթային եւ նույնականության ստուգման 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում նշված տարածքներից մեկում տեղակայված սահմանային հսկողության անցակետերից մեկում եւ այդ նպատակով հաստատվեն՝ վավերացնելու համար հետեւյալը՝

- դրանց ծագումը.
- դրանց հետագա նպատակակետը, մասնավորապես՝ տարանցիկ փոխադրման եւ այն կենդանիների դեպքում, որոնց առետուրը չի ներդաշնակեցվել Համայնքի մակարդակով կամ որոնց նկատմամբ գործում են նպատակակետ հանդիսացող անդամ պետության համար Համայնքի որոշմամբ ճանաչված հատուկ պահանջներ.
- որ վկայագրով կամ փաստաթղթերով ներկայացված տվյալները բավարարում են համայնքային կանոններով պահանջվող երաշխիքային պարտավորությունները, կամ այն կենդանիների դեպքում, որոնց առետուրը չի ներդաշնակեցվել Համայնքի մակարդակով՝

սույն Հրահանգով կարգավորվող տարբեր դեպքերում կիրառելի ազգային կանոնների համաձայն պահանջվող երաշխիքային պարտավորությունները.

### ՁՄ3

- որ «Ներկրման անասնաբուժական ընթացակարգերի համակարգչայնացման մասին» Խորհրդի 1992 թվականի հուլիսի 13-ի 92/438/ԵՏՀ որոշման (Ռեժիմների փոփոխության ծրագիր)<sup>6</sup>.1-ին հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված ընթացակարգով կատարված խմբաքանակի մերժման փաստ չկա:

"Բ

2. Չսահմանափակելով 8-րդ հոդվածի համաձայն տրամադրվող արտոնությունները՝ պաշտոնական անասնաբույժը պետք է իրականացնի սահմանային հսկողության անցակետ ներկայացված կենդանիների փաստացի ստուգում: Այդ ստուգումը պետք է, մասնավորապես, ներառի՝

- ա) կենդանիների կլինիկական հետազոտություն՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխանում են հարակից վկայագրում կամ փաստաթղթում ներկայացված տեղեկություններին, եւ որ կենդանիները կլինիկական տեսանկյունից առողջ են:

23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն՝ որոշակի պայմանների գործողության ենթակա եւ միեւնույն ընթացակարգի համաձայն սահմանված կանոններին համապատասխան շեղում պետք է կատարվի կենդանիների որոշ կատեգորիաների եւ տեսակների նկատմամբ առանձին կլինիկական հետազոտություն անցկացնելու սկզբունքից.

- բ) լաբորատոր հետազոտություններ, որոնք իրավասու անասնաբույժն անհրաժեշտ է համարում, կամ որոնք պահանջվում են համայնքային կանոններով.
- գ) պաշտոնապես վավերացած նմուշներ, եթե այդպիսիք կան, որոնք պետք է ուսումնասիրվեն՝ նստվածքներ հայտնաբերելու համար, եւ պետք է անալիզի ենթարկվեն հնարավորինս շուտ.

---

<sup>6</sup> ՊՏ թիվ L 243, 25.08.1992թ., էջ 27:



դ) Խորհրդի «Միջազգային փոխադրումների ժամանակ կենդանիների պաշտպանության մասին» 1977 թվականի հուլիսի 18-ի 77/489/ԵՏՀ հրահանգում<sup>7</sup> սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության ստուգում:

Երթուղու եւ, հարկ եղած դեպքում, նպատակակետ հասնելու լրացուցիչ պահանջներին համապատասխանության հետագա ստուգման նպատակներով իրավասու անասնաբույժն անհրաժեշտ տեղեկություններ է ուղարկում նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմիններին՝ 90/425/ԵՏՀ հրահանգի 20-րդ հոդվածում սահմանված տեղեկատվության փոխանակման համակարգի միջոցով:

Իրավասու անասնաբույժին որոշ աշխատանքներում կարող է օժանդակել համապատասխան որակավորում ունեցող աշխատակազմը, որը պետք է անցած լինի հատուկ վերապատրաստում եւ պետք է ղեկավարվի իրավասու անասնաբույժի կողմից:

### ՁՄ3

Ստուգումը պետք է կատարվի 92/438/ԵՏՀ որոշման 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանված տվյալների բազաներին հղում կատարելուց հետո:

### ▼B

3. Այնուամենայնիվ, 1-ին եւ 2-րդ պարբերություններից շեղում կատարելով, եթե կենդանիները բերվում են նավահանգիստ կամ օդանավակայան 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում սահմանված տարածքում, ապա նույնականության ստուգումը եւ փաստացի ստուգումը կարող են կատարվել նպատակակետ հանդիսացող նավահանգստում կամ օդանավակայանում, պայմանով, որ այդ նավահանգիստը կամ օդանավակայանն ունենա սահմանային հսկողության անցակետ, ինչպես նշված է 6-րդ հոդվածում, եւ որ կենդանիները շարունակեն ուղեւորությունը ծովով կամ օդով, միեւնույն նավով կամ օդանավով՝ ելնելով կոնկրետ դեպքից: Նման դեպքերում փաստաթղթային ստուգում իրականացրած իրավասու մարմինն անձամբ կամ տեղի անասնաբուժության գծով մարմնի միջոցով, օգտվելով 90/425/ԵՏՀ հրահանգի 20-րդ հոդվածում նշված տեղեկատվության փոխանակման համակարգից, տեղեկացնում է նպատակակետ հանդիսացող անդամ

<sup>7</sup>ՊՏ թիվ L 200, 08.08.1977թ., էջ 10:

պետության հսկողության անցակետի իրավասու անասնաբույժին, որ կենդանիներն անցել են իրենց անցակետով:

4. Սույն հոդվածի կիրառության հետեանքով ծագած բոլոր ծախսերը հոգում է բեռնափոխադրողը, բեռն ստացողը կամ նրանց գործակալը, որի համար անդամ պետությունը փոխհատուցում չի տրամադրում:

5. Սույն հոդվածի կիրառության մանրամասն կանոնները, այդ թվում՝ կապված օժանդակ ծառայություն մատուցողների վերապատրաստման եւ որակավորման հետ, ընդունվում են 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն, եթե նման անհրաժեշտություն առաջանում է:

### **Հոդված 5**

90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում սահմանված տարածքներ մուտք գործելն արգելվում է, եթե ստուգումները ցույց են տալիս, որ՝

- ա) կենդանիների տվյալ տեսակները, որոնց ներկրման կանոնները ներդաշնակեցված են համայնքային մակարդակով, չսահմանափակելով ձիազգի կենդանիների տեղաշարժի եւ ներկրման մասին 90/426/ԵՏՀ հրահանգի<sup>8</sup> 19-րդ հոդվածում սահմանված հատուկ պայմանների գործողությունը, ներկրվում են երրորդ երկրներից, երրորդ երկրի տարածքներից կամ նման տարածքների մի մասից, որոնք ներառված չեն տվյալ տեսակների համար համայնքային կանոնների համաձայն կազմված ցանկերում, կամ որոնց ներկրումն արգելված է Համայնքի մակարդակով ընդունված որոշման համաձայն.
- բ) (ա) կետում նշված կենդանիներից բացի՝ մյուս կենդանիները չեն բավարարում ազգային այն նորմերով սահմանված պահանջները, որոնցով կարգավորվում են սույն Հրահանգով կարգավորվող տարբեր դեպքեր.
- գ) կենդանիներն ունեն կամ կասկած կա, որ տառապում են կամ վարակված են վարակիչ հիվանդությամբ կամ այնպիսի հիվանդությամբ, որը հանրային առողջության կամ կենդանիների առողջության համար, կամ համայնքային կանոններով սահմանված որեւէ այլ պատճառով վտանգ է ներկայացնում
- դ) արտահանող երրորդ երկիրը չի կատարել համայնքային կանոններով սահմանված պահանջները.

---

<sup>8</sup>ՊՏ թիվ L 224, 18.08.1990թ., էջ 42:

ե) կենդանիների առողջական վիճակը բավարար չէ՝ ուղեորությունը շարունակելու համար.

զ) կենդանիներին կից տրված անասնաբուժական վկայագիրը կամ փաստաթուղթը չի բավարարում համայնքային կանոններով սահմանված պահանջները կամ, եթե կանոնները ներդաշնակեցված չեն, դրանք չեն բավարարում ազգային նորմերով սահմանված պահանջները, որոնք համապատասխանում են սույն Հրահանգով կարգավորվող տարբեր դեպքերին:

Սույն հոդվածը կիրարկելու համար մանրամասն կանոններ պետք է ընդունվեն 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

## Հոդված 6

1. Սահմանային հսկողության անցակետերը պետք է բավարարեն սույն հոդվածի պահանջները:

2. Սահմանային հսկողության անցակետերը պետք է՝

ա) տեղակայված լինեն 90/675/ԵՏՀ հրահանգում նշված տարածքներից որեւէ մեկի մուտքի կետում.

Այնուամենայնիվ, եթե աշխարհագրական սահմանափակումները պարտադրում են (ինչպես, օրինակ՝ բեռնաթափման ավի, երկաթուղային կայարան, անցակետեր) եւ պայմանով, որ նման դեպքում հսկողության անցակետը տեղակայված է այնպիսի հողատարածքներից եւ վայրերից հեռու, որտեղ կենդանիները կարող են վարակվել վարակիչ հիվանդություններով, ապա հսկողության անցակետի տեղակայումը մուտքի կետից հեռու կարող է թույլատրվել.

բ) տեղակայված լինի մաքսային տարածքում, որտեղ հնարավոր է կատարել վարչական ձեւականություններ՝ ներառյալ ներկրման հետ կապված մաքսային ձեւականությունները.

գ) նախագծված եւ վավերացված լինի 3-րդ պարբերության համաձայն.

դ) լինի իրավասու անասնաբույժի ղեկավարության տակ, ով պետք է փաստացիորեն պատասխանատու լինի ստուգումների համար: Իրավասու անասնաբույժին կարող է օժանդակել հատուկ վերապատրաստում անցած աշխատակազմ՝ վերջինիս ենթակայության

տակ: ►M3 Իրավասու անասնաբույժը պետք է ապահովի, որ 92/438/ԵՏՀ հրահանգի 1-ին հոդվածի երրորդ պարբերությունը նշված տվյալների բազան մշտապես թարմացվի: ◀

3. Նախքան 1992 թվականի հունվարի 1-ը եւ երբ ազգային մարմինները, համագործակցելով Հանձնաժողովի ստորաբաժանումների հետ, որոնք կստուգեն դրանց համապատասխանությունը Ա հավելվածում ամրագրված նվազագույն պահանջների հետ, նախնական ընտրությամբ կընտրեն սահմանային անցակետերը, անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն սահմանային հսկողության անցակետերի ցանկը, որոնք պատասխանատու են կենդանիների անասնաբուժական ստուգումների համար եւ պետք է ապահովեն վերջինիս հետեւյալ տեղեկություններով՝

ա) սահմանային հսկողության անցակետի տեսակը՝

- նավահանգիստ.
- օդանավակայան.
- ավտոճանապարհային անցակետ.
- երկաթուղային անցակետ.

բ) կենդանիների այն տեսակը, որոնց հնարավոր է ստուգել սահմանային հսկողության անցակետում այն սարքավորումներով եւ անասնաբուժական անձնակազմով, որոնք առկա են տվյալ անցակետում՝ նշելով այն կենդանիները, որոնք հնարավոր չէ ստուգել սահմանային հսկողության այդ անցակետերում, իսկ գրանցված ձիազգի կենդանիների դեպքում՝ դրա համար հատուկ իրավասություն ունեցող սահմանային հսկողության անցակետի աշխատանքային ժամերը

գ) անասնաբուժական հսկողության համար պատասխանատու աշխատակազմը՝

- իրավասու անասնաբույժների թիվը, որոնցից առնվազն մեկը մշտապես պետք է հերթափոխի լինի, երբ սահմանային հսկողության տվյալ անցակետը բաց է.
- հատուկ որակավորում ունեցող օժանդակ աշխատակազմի կամ օգնականների թիվը.

դ) սարքավորումների եւ տարածքի նկարագրությունը, որոնց միջոցով հնարավոր է կատարել՝

- փաստաթղթային ստուգում.
- փաստացի ստուգում.

- նմուշառում.

- 4 (2) (բ) հոդվածում սահմանված ընդհանուր փորձաստուգումներ.

- իրավասու անասնաբույժի կողմից հրահանգված հատուկ փորձաստուգումներ.

ե) տարածքի մեծությունը, որտեղ հնարավոր է պահել կենդանիներ, եթե անհրաժեշտ է սպասել փորձաստուգումների արդյունքներին.

զ) սարքավորումների տեսակը, որոնց միջոցով հնարավոր է արագ տեղեկություններ փոխանակել, մասնավորապես՝ սահմանային հսկողության այդ անցակետերի հետ.

է) ապրանքաշրջանառության ծավալները (սահմանային հսկողության այդ անցակետով անցնող կենդանիների տեսակը եւ թիվը):

4. Գործելով ազգային իրավասու մարմինների հետ համագործակցության պայմաններում՝ Հանձնաժողովը տեսչական ստուգումներ է անցկացնում 3-րդ պարբերության համաձայն նախագծված սահմանային հսկողության անցակետերում՝ համոզվելու համար, որ անասնաբուժական հսկողության կանոնները գործեն միատեսակ, եւ որ սահմանային հսկողության տարբեր անցակետերն իրականում ունենան անհրաժեշտ ենթակառուցվածքներ եւ պահպանեն Ա հավելվածում ամրագրված նվազագույն պահանջները:

Նախքան 1992 թվականի հունվարի 1-ը՝ Հանձնաժողովը Անասնաբուժության գծով մշտական կոմիտե է ուղարկում հաշվետվություն առաջին ենթապարբերության մեջ նշված տեսչական ստուգման արդյունքների վերաբերյալ՝ ներկայացնելով նաեւ առաջարկ, որում հաշվի են առնվում հաշվետվության եզրակացությունները՝ նպատակ ունենալով կազմելու Համայնքում գործող սահմանային հսկողության անցակետերի ցանկը: Այդ ցանկը պետք է վավերացվի եւ հետագայում թարմացվի՝ 22-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

Վերոնշյալ հաշվետվության մեջ ներառվում են բոլոր այն խնդիրները, որոնց որոշ անդամ պետություններ կարող են հանդիպել, եթե 3-րդ պարբերության առաջին ենթապարբերության մեջ նշված նախնական ընտրության արդյունքում մեծ թվով սահմանային հսկողության անցակետեր դուրս մնան ընտրությունից 1992 թվականի հուլիսի 1-ի դրությամբ:

Նման խնդիրները հաշվի առնելու նպատակով՝ սահմանային հսկողության որոշ անցակետերի կարող է տրվել գործելու իրավունք եւ առավելագույնը երեք տարի ժամանակ՝ սույն Հրահանգի՝ սարքավորումների եւ կառուցվածքների հետ կապված պահանջները բավարարելու համար:

Հանձնաժողովը հրապարակում է սահմանային հսկողության սահմանակետերի հաստատված ցուցակը եւ հետագայում կատարված բոլոր փոփոխությունները Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

5. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում ընդունում է մանրամասն կանոններ, որոնք անհրաժեշտ են, 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն, սույն հոդվածը կիրարկելու համար:

## Հոդված 7

1. Եթե այն տեսակների կենդանիներին, որոնց համար Համայնքի մակարդակով ներդաշնակեցվել են ներկրման կանոնները, արգելում են բերել 4-րդ հոդվածում նշված ստուգումներ իրականացրած անդամ պետության շուկա, ապա սահմանային հսկողության անցակետի իրավասու անասնաբույժը՝ չխախտելով 90/427/ԵՏՀ հրահանգում<sup>9</sup> սահմանված կարգով գրանցված եւ նույնականության փաստաթուղթ ունեցող ձիազգի կենդանիների համար կիրառելի հատուկ պահանջները, պետք է՝

- համապատասխան անձին տրամադրի կենդանիների մասով բնօրինակ վկայագրերի պատճենը, կամ եթե կենդանիները բեռնափոխադրվել են մի քանի փոխադրումով, ապա դրանց առանձին-առանձին վավերացված պատճենները. նման պատճենների վավերականության ժամկետը չպետք է գերազանցի 10 օրը.
- տրամադրի վկայագիր, որը պետք է համապատասխանի Հանձնաժողովի կողմից 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համար կազմված ձեւին եւ որով պետք է հավաստվի, որ 4 (1) եւ (2) (ա), (ա) եւ (դ) հոդվածներում նշված ստուգումները կատարվել են իրավասու անասնաբույժի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան եւ պետք է սահմանի վերցված նմուշների տեսակն ու լաբորատոր փորձաստուգման արդյունքները կամ հավաստի, որ նման արդյունքներ ակնկալվում են.

<sup>9</sup>ՊՏ թիվ L 224, 18.08.1990թ., էջ 55:

– պահպանի կենդանիներին կից տրված, վկայագրի կամ վկայագրերի բնօրինակը:

2. 1-ին պարբերության կիրարկման մանրամասն կանոններն ընդունվում են 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

3. Երբ կենդանիները անցնում են սահմանային հսկողության անցակետերը, 1-ին պարբերության մեջ նշված եւ 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում նշված տարածքներ մուտքի իրավունք ունեցող կենդանիների առետուրը կատարվում է 90/425/ԵՏՀ հրահանգում սահմանված անասնաբուժական ստուգումների կանոնների համաձայն:

▼C1

Նպատակակետ հանդիսացող վայրի իրավասու մարմնին 90/425/ԵՏՀ հրահանգի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության փոխանակման համակարգի միջոցով տրվող տեղեկություններում, մասնավորապես, պետք է սահմանվեն, թե արդյոք՝

▼B

– կենդանիները նախատեսված են անդամ պետություն, թե հատուկ պահանջներ ունեցող տարածք ներկրելու համար.

– նմուշներ վերցված են, բայց արդյունքները դեռ հայտնի չեն, երբ տրանսպորտային միջոցները մեկնում են սահմանային հսկողության անցակետից:

## Հոդված 8

Ա. Անդամ պետություններն ապահովում են, որ՝

1. 90/425/ԵՏՀ հրահանգի Ա հավելվածում ներառված կենդանիների տեսակների անասնաբուժական ստուգումները կամ ներկրումներն իրականացվեն հետեւյալ դրույթների համաձայն՝

ա) եթե կենդանիներն անմիջականորեն ներկայացվում են ներկրման համար պատրաստ անդամ պետության սահմանային հսկողության անցակետ, ապա դրանք տվյալ անցակետում ենթարկվեն 4-րդ հոդվածում սահմանված բոլոր ստուգումներին.

բ) եթե կենդանիները ներկայացվում են սահմանային հսկողության անցակետ, որը տեղակայված է մեկ այլ անդամ պետությունում, ապա պետք է լինի տվյալ անդամ պետության նախնական համաձայնությունը՝

i) 4-րդ հոդվածում նշված բոլոր ստուգումները կատարվեն այդ անցակետում՝ նպատակակետ հանդիսացող անդամ պետության անունից, որպեսզի, մասնավորապես, հնարավոր լինի ապահովելու, որ այդ անդամ պետության՝ կենդանիների առողջության վերաբերյալ պահանջները պահպանված լինեն.

ii) կամ, երկու անդամ պետությունների եւ, անհրաժեշտության դեպքում՝ անդամ պետության կամ տարանցիկ փոխադրման անդամ պետությունների գլխավոր իրավասու մարմինների միջեւ համաձայնության դեպքում՝ այդ անցակետում իրականացվում են միայն այն ստուգումները, որոնք նախատեսված են 4 (1) հոդվածով եւ այդ դեպքում 4-րդ հոդվածով նախատեսված ստուգումներն իրականացվում են նպատակակետ հանդիսացող անդամ պետությունում:

Այդ դեպքում, այնուամենայնիվ, կենդանիները կարող են մեկնել սահմանային հսկողության անցակետից, եթե փաստաթղթային ստուգումը կատարվել է, եւ նույնականության ստուգումն իրականացվել է միայն կնիքով փակված մեքենաներում եւ միայն այն բանից հետո, երբ իրավասու անասնաբույժը՝

– բնօրինակ վկայագրերի պատճենի վրա, կամ եթե բեռնափոխադրումը կատարվում է մի քանի փոխադրումներով՝ պատճենների վրա, նշել է, որ կենդանիներն անցել են այդ անցակետով եւ որ ստուգումն իրականացվել է.

– 90/425/ԵՏՀ հրահանգի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության փոխանակման համակարգի միջոցով տեղեկացրել է նպատակակետ հանդիսացող վայրի անասնաբուժության գծով մարմնին, կամ հարկ եղած դեպքում՝ անդամ պետությանը կամ տարանցիկ փոխադրման անդամ պետություններին, որ կենդանիներն անցել են տվյալ անցակետով.

– չնայած 3 (1) գ) հոդվածին՝ սահմանային հսկողության անցակետի իրավասու մաքսային մարմնին ստացական թ է տալիս ներկայացված կենդանիների մասով:

Սպանդի համար նախատեսված կենդանիների դեպքում, անդամ պետությունները կարող են կատարել միայն (i) կետում սահմանված տարբերակը:

Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին եւ Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակում հավաքվող մյուս անդամ պետությունների ներկայացուցիչներին (ii) կետում նշված տարբերակից օգտվելու մասին.



2. մինչեւ համայնքային կանոններով սահմանված հատուկ որոշումներ ընդունելը՝ այն կենդանիները, որոնց առետուրը ներդաշնակեցված է Համայնքի մակարդակով, բայց որոնք բերվում են այնպիսի երրորդ երկրներից, որտեղ համընդհանուր առողջապահական պայմաններ կենդանիների համար դեռ չեն հաստատվել, պետք է ներկրվեն հետեյալ պայմանների համաձայն՝

- դրանք պետք է մնան ուղարկող երրորդ երկրում առնվազն այնքան ժամանակ, ինչքան սահմանված է Խորհրդի «Երրորդ երկրներից խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ եւ այծեր, ինչպես նաեւ խոզեր, թարմ միս կամ մսամթերք ներկրման ժամանակ առողջության եւ անասնաբուժական տեսչական ստուգումների խնդիրների մասին» 1972 թվականի դեկտեմբերի 12-ի 72/462/ԵՏՀ հրահանգի 10 (1) հոդվածում<sup>10</sup>.
- դրանք պետք է անցնեն 4-րդ հոդվածով սահմանված ստուգումները.
- դրանք չպետք է հեռացվեն սահմանային հսկողության անցակետից կամ կարանտինի կենտրոնից, քանի դեռ ստուգումները ցույց չեն տվել, որ կենդանին կամ կենդանիների խմբաքանակը՝

—

- i) կա՛մ, չսահմանափակելով Համայնքի համար օտար հիվանդությունների առումով երրորդ երկրների նկատմամբ կիրառելի հատուկ պահանջների գործողությունը, բավարարում է տվյալ տեսակների առետրի մասով կենդանիների առողջության պահանջները, ինչպես դրանք սահմանված են 90/425/ԵՏՀ հրահանգի Ա հավելվածում կամ 72/462/ԵՏՀ հրահանգում սահմանված՝ կենդանիների առողջապահության մասին պահանջները.
- ii) կա՛մ մեկ կամ մի քանի հատուկ հիվանդությունների առումով բավարարում է 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն՝ երրորդ երկրի եւ Համայնքի պահանջների միջեւ փոխատեղեփության սկզբունքով համարժեք ճանաչված պայմանները.
- եթե այդ կենդանիները նախատեսված են 90/425/ԵՏՀ հրահանգի 3 (1) (ե) (iii) եւ (iv) հոդվածում սահմանված լրացուցիչ երաշխիքներից օգտվող անդամ պետության համար, ապա դրանք պետք է բավարարեն միջհամայնքային առետրի մասով սահմանված համապատասխան պահանջները:

<sup>10</sup>ՊՏ թիվ L 302, 31.12.1972թ., էջ 28: Վերջին անգամ 91/266/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 134, 29.05.1991թ., էջ 45):

– սահմանային հսկողության անցակետից անցնելուց հետո, սպանդի համար նախատեսված կենդանիների դեպքում դրանք պետք է տեղափոխվեն նպատակային սպանդանոց, կամ տեսակի վերարտադրության եւ արտադրության կամ ակվակուլտուրայի կենդանիների դեպքում՝ պետք է տեղափոխվեն նպատակային վայրը.

3. եթե 1-ին եւ 2-րդ կետերում սահմանված ստուգումները, որոնք ցույց են տալիս, որ կենդանին կամ կենդանիների խմբաքանակը չի համապատասխանում այդ կետերում նշված պահանջներին, ապա այդ կենդանին կամ խմբաքանակը չի կարող հեռացվել սահմանային հսկողության անցակետից կամ կարանտինի կենտրոնից եւ դրա նկատմամբ կգործի 12-րդ հոդվածը.

4. եթե 1-ին կետում նշված կենդանիները նախատեսված չեն շուկայահանման համար այն անդամ պետության տարածքում, որն իրականացրել է անասնաբուժական հսկողությունը, ապա գործում են 7-րդ հոդվածի դրույթները, մասնավորապես՝ վկայագիր տրամադրելու մասով.

5. նպատակակետ հանդիսացող վայրում տեսակի վերարտադրության եւ արտադրության նպատակով կենդանիները պետք է մնան իրավասու անասնաբուժական մարմինների պաշտոնական հսկողության տակ: 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն որոշված դիտարկման ժամանակահատվածից հետո, կարելի է իրականացնել այդ կենդանիների միջհամայնքային առետուր՝ 90/425/ԵՏՀ հրահանգում սահմանված պայմանների համաձայն:

Սպանդի համար նախատեսված կենդանիները նպատակային սպանդանոցում ենթակա են համայնքային կանոններին, որոնք վերաբերում են տվյալ տեսակի կենդանու սպանդին:

Բ. Սույն հոդվածի կիրարկման համար մանրամասն կանոններ՝ անհրաժեշտության դեպքում, ընդունվում են 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

## Հոդված 9

### ՁԱ2

1. Անդամ պետությունները թույլատրում են կենդանիների տարանցիկ փոխադրումը մի երրորդ երկրից մյուսը կամ դեպի միեւնոյն երրորդ երկիր՝ պայմանով, որ՝

▼B

- ա) նման տարանցիկ փոխադրումը նախկինում վավերացված լինի կենդանիներին ներկայացնելու տարածքի անդամ պետության սահմանային հսկողության անցակետի իրավասու անասնաբույժի կողմից՝ անցնելու համար 4-րդ հոդվածում սահմանված ստուգումները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն պետք է վավերացված լինի տարանցիկ փոխադրման անդամ պետության կամ անդամ պետությունների գլխավոր իրավասու մարմնի կողմից.
- բ) տվյալ կողմը ներկայացնի ապացույց այն մասին, որ առաջին երրորդ երկիրը, ուր ուղարկվում են կենդանիները 90/675/ԵՏՀ հրահանգի I հոդվածում նշված տարածքներից մեկով տարանցիկ փոխադրվելուց հետո, պարտավորվում է ոչ մի դեպքում չհրաժարվել կամ կենդանիներին հետ չուղարկել, եթե այն թույլատրել է տվյալ կենդանու ներկրումը կամ տարանցիկ փոխադրումը եւ պարտավորվում է պահպանել տրանսպորտային երթուղուկայանի ժամանակ համայնքային պաշտպանության կանոնները 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում նշված տարածքներում.
- գ) 4-րդ հոդվածում նշված ստուգմամբ անասնաբույժը համոզվի, որ անհրաժեշտության դեպքում կարանտինի կենտրոնում ստուգվելուց հետո, կենդանիները բավարարում են սույն Հրահանգի պահանջները կամ 90/425/ԵՏՀ հրահանգի Ա հավելվածում նշված կենդանիների դեպքում՝ ապահովում են 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն՝ որպես համարժեք ճանաչված՝ առողջության մասով երաշխիքները.
- դ) սահմանային հսկողության անցակետի իրավասու մարմինը ►M3 90/425/ԵՏՀ հրահանգի 20-րդ հոդվածում նշված ◀ տեղեկատվության փոխանակման համակարգի միջոցով ծանուցի տարանցիկ փոխադրման եւ ելքի սահմանային անցակետի անդամ պետության կամ անդամ պետությունների իրավասու մարմիններին այն մասին, որ կենդանիներն անցել են իրենց անցակետով.
- ե) 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում նշված տարածքներից մեկով անցնելու դեպքում տարանցիկ փոխադրումը կատարվում է տարանցիկ փոխադրման մասով համայնքային ընթացակարգի (արտաքին տարանցիկ փոխադրում) կամ համայնքային կանոններով սահմանված տարանցիկ փոխադրման մաքսային որեւէ այլ կանոնների համաձայն. տարանցիկ փոխադրման ընթացքում կանգառ թույլատրվում է միայն I հավելվածում նշված տարածքների մուտքի կամ դրանցից ելքի անցակետում, եւ եթե դա պահանջում է կենդանիների բարեկեցությունը:

2. Սույն հոդվածի կիրառության հետեւանքով ծագած բոլոր ծախսերը հոգում է բեռնափոխադրողը, բեռն ստացողը կամ նրանց գործակալը, որի համար անդամ պետությունը փոխհատուցում չի տրամադրում:

### **Հոդված 10**

1. Եթե այն տարածքներում, որտեղ ներդաշնակեցում չի կատարվել եւ Պայմանագրի ընդհանուր կանոնների համաձայն, համայնքային կանոններով կամ նպատակակետ հանդիսացող վայրի ազգային կանոններով պահանջվում է, որ կենդանի կենդանիները դրվեն կարանտինի տակ կամ մեկուսացվեն, ապա կարանտինը կամ մեկուսացումը կարող է կատարվել՝

- դաբադից, կատաղությունից եւ նյութալ հիվանդությունից բացի այլ հիվանդությունների դեպքում՝ ծագման երրորդ երկրում տեղակայված կարանտինի կենտրոնում՝ պայմանով, որ այդ կենտրոնը հաստատված լինի 22-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն եւ կանոնավոր տեսչական ստուգումների ենթարկվի Հանձնաժողովի անասնաբուժության գծով փորձագետների կողմից.
- Համայնքի տարածքում տեղակայված կարանտինի կենտրոնում, որը համապատասխանում է Բ հավելվածում սահմանված պահանջներին.
- նպատակակետ հանդիսացող վայրում:

Ծագման կամ նպատակակետ հանդիսացող վայրի կարանտի կենտրոն տնտեսություններից մինչեւ սահմանային հսկողության անցակետերի եւ նախորդ ենթապարբերության առաջին պարբերություն նշված կարանտինի կենտրոնների միջեւ տրանսպորտի ժամանակ պահանջվող հատուկ երաշխիքներ կարող են սահմանվել 23-րդ հոդվածում ամրագրված ընթացակարգի համաձայն:

2. Եթե իրավասու անասնաբույժը պատասխանատու է սահմանային հսկողության անցակետի՝ կարանտինի դնելու հրամանների համար, ապա այդ կարանտինը, կախված իրավասու անասնաբույժի կողմից ախտորոշված վտանգավորությունից, պետք է տեղի ունենա՝

- կա՛մ հենց սահմանային հսկողության անցակետում կամ դրա անմիջական հարեւանությամբ.
- կա՛մ նպատակակետ հանդիսացող վայրում.

– կա՛մ նպատակակետ հանդիսացող վայրի հարեւանությամբ տեղակայված կարանտինի կենտրոնում:

3. 1-ին պարբերության առաջին եւ երկրորդ պարբերությունում նշված կարանտինի կենտրոնների համար պահանջվող ընդհանուր պայմանները սահմանված են Բ հավելվածում:

Կենդանիների տարբեր տեսակների համար կիրառելի հաստատման հատուկ պայմանները ընդունվում են 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

ՁՄ6

4.

ա) 22-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին պետք է հետեւել 1-ին պարբերության առաջին պարբերությամբ նշված կարանտինի կենտրոնների ցանկը հաստատելու եւ դրանք հետագայում թարմացնելու համար: Հանձնաժողովը հրապարակում է կարանտինի այդ կենտրոնների ցանկը եւ ցանկում կատարված բոլոր հետագա փոփոխությունները Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

բ) 1-ին պարբերության երկրորդ պարբերությամբ եւ 2-րդ պարբերության առաջին պարբերությամբ նշված կարանտինի կենտրոնները, որոնք բավարարում են Բ հավելվածում սահմանված պայմանները, պետք է հաստատվեն անդամ պետությունների կողմից եւ յուրաքանչյուր կենտրոնի կցվում է գրանցման համար: Յուրաքանչյուր անդամ պետություն կազմում եւ թարմացված վիճակում պահում է հաստատված կարանտինի կենտրոնների ցանկը եւ նրանց գրանցման համարը, որը նա հասանելի է դարձնում այլ անդամ պետությունների եւ հասարակությանը: Կարանտինի կենտրոնները պետք է 19-րդ հոդվածում սահմանված տեսչական ստուգման ենթարկվեն:

Սույն ենթապարբերության համընդհանուր կիրարկման մանրամասն կանոններ կարող են ընդունվել 22-րդ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

▼B

5. 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերությունը եւ 3-րդ ու 4-րդ պարբերությունները չեն գործում կարանտինի այն կենտրոնների մասով, որոնք նախատեսված են բացառապես 8 (Ա) (1) հոդվածում նշված կենդանիների համար:

6. Սույն հոդվածի կիրառության հետեանքով գոյացած բոլոր ծախսերը հոգում է բեռնափոխադրողը, բեռն ստացողը կամ նրանց ներկայացուցիչը, որոնց համար անդամ պետությունը փոխհատուցում չի տրամադրում:

7. Նախքան 1996 թվականի հունվարի 1-ը՝ Հանձնաժողովը Խորհուրդ պետք է հաշվետվություն ներկայացնի, որին կից կարող են ներկայացվել առաջարկներ՝ Համայնքի մակարդակով գործող կարանտինի կենտրոնների եւ դրանց գործունեության համար Համայնքից ստացվող ֆինանսական օժանդակության անհրաժեշտության մասին:

### **Հոդված 11**

Չսահմանափակելով սույն գլխի մյուս դրույթների գործողությունը՝ եթե իրավասու անասնաբույժը կամ իրավասու մարմինը կասկածում է, որ անասնաբուժության մասով օրենսդրությունը չի պահպանվել եւ կասկածներ կան կենդանիների նույնականության մասին, ապա նրանք իրականացնում են անասնաբուժական ստուգումներ, որոնք անասնաբույժը կամ տվյալ մարմինն անհրաժեշտ է համարում:

2. Անդամ պետությունները ընդունում են համապատասխան վարչական կամ քրեական միջոցներ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից անասնաբուժության ոլորտի օրենսդրության ցանկացած խախտման համար, եթե նրանք կարծում են, որ խախտվել են համայնքային կանոնները, մասնավորապես, եթե նրանք հայտնաբերում են, որ կազմված վկայագրերը կամ փաստաթղթերը չեն համապատասխանում կենդանիների փաստացի վիճակին, որ նույնականացման դրոշմները չեն պահպանում այդ կանոնները, կամ կենդանիները չեն ներկայացվել տեսչական ստուգման սահմանային անցակետում, կամ կենդանիները չեն ուղարկվել սկզբնականապես նախատեսված նպատակակետ հանդիսացող վայր:

### **Հոդված 12**

1. Եթե սույն Հրահանգում նշված ստուգումները ցույց են տալիս, որ կենդանին չի բավարարում համայնքային կանոններով, իսկ դեռ չներդաշնակեցված հարցերով՝ ազգային կանոններով սահմանված պահանջները, կամ եթե ստուգումների արդյունքում

հայտնաբերվում է խախտում, ապա իրավասու մարմինը ներկրողի կամ նրա ներկայացուցչի հետ խորհրդակցելուց հետո ընդունում է հետեւյալ որոշումներից որեւէ մեկը՝

ա) կացարան տրամադրել, կերակրել ու ջուր տալ եւ, անհրաժեշտության դեպքում, բուժել կենդանիներին, կամ

բ) եթե անհրաժեշտ է՝ սահմանել կարանտին կամ մեկուսացնել խմբաքանակը.

գ) իրավասու ազգային մարմնի կողմից սահմանված ժամկետում դուրս բերել կենդանիների խմբաքանակը 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում սահմանված տարածքներից, եթե կենդանիների առողջության կամ կենդանիների բարեկեցության պահանջները թույլ են տալիս:

Այդ դեպքում, սահմանային հսկողության անցակետի իրավասու անասնաբույժը պետք է՝

### M3

– իրականացնի 92/438/ԵՏՀ որոշման 1–ին հոդվածի առաջին պարբերություն սահմանված տեղեկատվության ընթացակարգը.

### ▼B

23-րդ հոդվածում ընթացակարգի համաձայն սահմանվող պայմանավորվածությունների համաձայն չեղյալ հայտարարել մերժված խմբաքանակին կից ներկայացված անասնաբուժական վկայագիրը կամ փաստաթուղթը:

### ▼M3 \_\_\_\_\_

### ▼B

Եթե անհնար է վերաառաքել խմբաքանակը, մասնավորապես ելնելով կենդանիների բարեկեցության նկատառումներից, ապա իրավասու անասնաբույժը՝

– իրավասու մարմնի կողմից համաձայնությունն ստանալուց եւ սպանդից առաջ կատարվող ստուգումից հետո, կարող է թույլատրել մարդու սպառման նպատակով կենդանիների սպանդը համայնքային կանոններով սահմանված պայմանի համաձայն.

– հակառակ դեպքում, պետք է կարգադրի կատարել սպանդը մարդու կողմից սպառումից բացի այլ նպատակներով կամ կարգադրել դուրս գրել կենդանիների մեղիքը՝ սահմանելով ստացված արտադրանքի կիրառության նկատմամբ վերահսկման պայմաններ:

Իրավասու գլխավոր մարմինը տեղեկացնում է Հանձնաժողովին այն դեպքերի մասին, երբ, 4-րդ պարբերության համաձայն, օգտվում է այս շեղումներից:

Հանձնաժողովը կանոնավորապես տեղեկացնում է Անասնաբուժության գծով մշտական կոմիտեին նման դեպքերի մասին:

2. Ներկրողը կամ նրա ներկայացուցիչը պատասխանատու է 1-ին պարբերության մեջ սահմանված միջոցների իրականացման, խմբաքանակը ոչնչացնելու կամ այլ նպատակներով միսն օգտագործելու ժամանակ առաջացած ծախսերի համար:

1 (գ) պարբերության երրորդ ենթապարբերության մեջ նշված արտադրանքի վաճառքից ստացված եկամուտը պետք է ստանա կենդանիների սեփականատերը կամ նրա ներկայացուցիչը՝ վերոնշյալ ծախսերը մասհանելուց հետո:

3. Անհրաժեշտության դեպքում ընդունվում են սույն հոդվածի կիրարկման համար մանրամասն կանոններ՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

▼M3

4. Կիրառվում են 92/438/ԵՏՀ որոշման դրույթները:

▼B

5. Հարկ եղած դեպքում՝ իրավասու մարմինները Խորհրդի «Անդամ պետությունների վարչական մարմինների միջեւ փոխօժանդակության եւ վերջիններիս ու Հանձնաժողովի միջեւ համագործակցության մասին» 1989 թվականի նոյեմբերի 21-ի 89/608/ԵՏՀ հրահանգի համաձայն՝ իրենց տիրապետության տակ գտնվող տեղեկությունները փոխանակում են՝ անասնաբուժական եւ զոոտեխնիկական հարցերով օրենսդրության ճիշտ կիրարկումն ապահովելու համար<sup>11</sup>:

### Հոդված 13

23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը երկրորդ ենթապարբերության մեջ նշված ծրագրերի հիման վրա ընդունում է կանոններ, որոնք կիրառելի են տեղական սպառման նպատակով սպանդի, տեսակի վերարտադրության կամ արտադրության համար նախատեսված կենդանիների ներկրման դեպքում 90/675/ԵՏՀ

<sup>11</sup>ՊՏ թիվ L 351, 02.12.1989թ., էջ 34:



հրահանգի I հավելվածում նշված տարածքների որոշ տեղանքներում՝ հաշվի առնելու համար այդ տարածքներին հատուկ բնական սահմանափակումները, այդ թվում՝ Համայնքի տարածքի կենտրոնական մասերից դրանց հեռավորությունը:

Այդ նպատակով ամենաուշը մինչև 1991 թվականի դեկտեմբերի 31-ը անդամ պետությունները Հանձնաժողով ծրագիր են ներկայացնում երրորդ երկրների առաջին ենթապարբերության մեջ նշված տարածքների կենդանիների ներկրման ստուգումներն անցկացնելու ընթացակարգերը սահմանելու համար: Այդ ծրագրերով պետք է սահմանվեն այն ստուգումները, որոնք պետք է իրականացվեն նշված տարածքներում ներկրված կենդանիները կամ դրանցից ստացված արտադրանքը որեւէ հանգամանքով Համայնքի այլ տարածքներ առաքելը կանխարգելելու համար:

]

#### **Հոդված 14**

Սույն Հրահանգի 7 (3) հոդվածում նշված ստուգումներն իրականացնելու նպատակներով 90/425/ԵՏՀ հրահանգի 3 (1) (գ) հոդվածում սահմանված նույնականացումը կամ գրանցումը սպանդի համար նախատեսված կենդանիների եւ գրանցված ծիազգի կենդանիներից բացի այլ դեպքերում իրականացվում է կենդանիների տեղափոխման նպատակակետ հանդիսացող վայրում, հարկ եղած դեպքում՝ սույն Հրահանգի 8Ա (5) հոդվածում սահմանված դիտարկման շրջանն ավարտելուց հետո:

Սպանդի համար կենդանիներ նույնականացնելու կամ դրոշմավորելու ընթացակարգերն ամրագրվում են 23-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

▼M4

#### **Հոդված 15**

Անդամ պետությունները վճար են գանձում անասնաբուժական եւ առողջության հետ կապված ստուգումների համար, եթե սույն Հրահանգում նշված կենդանիները ներկրվում են 96/23/ԵՀ հրահանգ<sup>12</sup> համաձայն:

▼B

---

<sup>12</sup>ՊՏ թիվ L 125, 23.05.1996թ., էջ 10:

## Հոդված 16

Չսահմանափակելով այն ստուգումների գործողությունը, որոնք կատարվում են՝ համոզվելու համար, որ փոխադրման ժամանակ պահպանվում են բարեկեցության մասով պահանջները՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն եւ փոխադարձության հիման վրա, նույնականության եւ (կամ) փաստացի ստուգումները կարող են կիրառվել առավել պակաս հաճախականությամբ որոշակի պայմանների դեպքում, մասնավորապես, հաշվի առնելով սույն Հրահանգի ընդունումից առաջ կատարված ստուգումների արդյունքները:

Հանձնաժողովն այս բնույթի շեղումներին իրավունք տալու համար հաշվի է առնում հետեւյալ չափորոշիչները՝

- ա) համայնքային պահանջների համապատասխանության առումով երրորդ երկրի կողմից առաջարկվող երաշխիքները, մասնավորապես՝ 72/462/ԵՏՀ եւ 90/426/ԵՏՀ հրահանգներում նշված երաշխիքների առումով.
- բ) տվյալ երրորդ երկրում կենդանիների առողջական վիճակը.
- գ) երրորդ երկրում առողջության հետ կապված վիճակը.
- դ) երրորդ երկրում հիվանդությունը դիտանցելու եւ դրա դեմ պայքարելու համար կիրառվող միջոցների բնույթը.
- ե) անասնաբուժական ծառայության ոլորտի կառույցները եւ այդ ծառայության համար տրամադրված իրավասությունները.
- զ) որոշ նյութեր արտոնելու կանոնները եւ Խորհրդի «Մնացորդների առկայություն հայտնաբերելու նպատակով կենդանիների եւ թարմ մսի հետազոտման մասին» 1986 թվականի սեպտեմբերի 16-ի 86/469/ԵՏՀ հրահանգի<sup>13</sup> 7-րդ հոդվածում սահմանված պահանջների հետ համապատասխանությունը.
- է) Համայնքի կողմից տեսչական այցերի արդյունքը.
- ը) արդեն իրականացված ներկրման ստուգումների արդյունքը:

---

<sup>13</sup>ՊՏ թիվ L 275, 26.09.1986թ., էջ 36:

## Հոդված 17

Իրավասու մարմինների որոշումների դեմ անդամ պետություններում գործող օրենքների համաձայն բողոքարկելու իրավունքները չեն փոփոխվում սույն Հրահանգով:

Նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմնի կողմից ընդունված որոշումները եւ նման որոշում ընդունելու պատճառները ծանուցվում են այդ որոշումների հարցում հետաքրքրություն ունեցող ներկրողին կամ նրա ներկայացուցչին:

Եթե շահագրգիռ ներկրողը կամ նրա ներկայացուցիչը պահանջ է ներկայացնում, ապա վերոնշյալ որոշումները եւ դրանց ընդունման պատճառներն իրենց գրավոր են հանձնվում՝ նշելով մանրամասներ բողոքարկելու իրավունքների ու դրանց համար կիրառելի ընթացակարգերի եւ ժամանակային սահմանափակումների մասին, որոնցից իրենք կարող են օգտվել՝ սահմանի հսկողության անցակետի տեղակայման անդամ պետությունում գործող իրավունքի համաձայն:



## Հոդված 17ա

Ավստրիան եւ Ֆինլանդիան Անդամակցության համաձայնագիրը գործողության մեջ մտնելու ամսաթվից ունեն երեք տարի ժամանակ՝ սույն գլխում սահմանված ստուգումների համակարգը ներմուծելու համար: Անցումային շրջանում Ավստրիան եւ Ֆինլանդիան կիրառում են այնպիսի միջոցներ, որոնք կսահմանվեն՝ նախքան Անդամակցության համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն: Այդ միջոցները պետք է ապահովեն, որ անհրաժեշտ բոլոր ստուգումներն իրականացվեն Համայնքի արտաքին սահմանին հնարավորինս մոտ:

▼M5 \_\_\_\_\_

▼B

## ԳԼՈՒԽ II

### Պաշտպանիչ դրույթները

#### Հոդված 18

Եթե երրորդ երկրում ծագում է Խորհրդի՝ «Համայնքի ներսում կենդանիների հիվանդությունների վերաբերյալ ծանուցման մասին» 1982 թվականի դեկտեմբերի 21-ի 82/894/ԵՏՀ հրահանգում նշված հիվանդություն, զոոնիզ կամ մեկ այլ հիվանդություն կամ կենդանիների, կամ մարդկանց առողջության համար վտանգ ներկայացնող երեւոյթ է տեղի ունենում կամ տարածվում այդ երկրի տարածքում, կամ եթե կենդանիների առողջության հետ կապված որեւէ այլ հիմնավորմամբ, մասնավորապես, անասնաբույժ փորձագետների կողմից ստացված արդյունքների հիմքով պահանջվում է, ապա Հանձնաժողովը, իր սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետության պահանջով, կարող է առանց հապաղման եւ, իրավիճակի հրատապությունից ելնելով, ընդունել հետեւյալ միջոցներից որեւէ մեկը՝

– կասեցնել տվյալ երրորդ երկրից կամ դրա մի մասից, եւ հարկ եղած դեպքում՝ տարանցիկ փոխադրման երրորդ երկրից եկող ներկրումները.

– սահմանել տվյալ երրորդ երկրից կամ դրա մի մասից բերվող կենդանիների համար հատուկ պայմաններ:

2. Եթե սույն Հրահանգով սահմանված ստուգումների արդյունքում պարզ է դառնում, որ կենդանիների որեւէ խմբաքանակ կարող է վտանգ ներկայացնել կենդանիների կամ մարդկանց առողջության համար, ապա անասնաբուժության գծով իրավասու մարմինը պետք է անհապաղ ձեռնարկի հետեւյալ միջոցները՝

– առգրավի եւ ոչնչացնի այդ խմբաքանակը.

– անմիջապես տեղեկացնի սահմանային հսկողության այլ անցակետերի եւ Հանձնաժողովին իր կողմից հայտնաբերված արդյունքների ու կենդանիների ծագման մասին՝ 12 (4) հոդվածի համաձայն:

3. 1-ին պարբերության մեջ սահմանված դեպքում Հանձնաժողովը կարող է ընդունել միջանկյալ պաշտպանական միջոցներ՝ 9-րդ հոդվածում կարգավորվող կենդանիների առումով:

4. Հանձնաժողովի ներկայացուցիչները կարող են անհապաղ այցելել տվյալ երրորդ երկիր:
5. Եթե անդամ պետությունը պաշտոնապես տեղեկացնում է Հանձնաժողովին պաշտպանական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին, եւ Հանձնաժողովը կիրառության մեջ չի դրել 1-ին եւ 3-րդ պարբերությունները կամ հղել գործը Անասնաբուժության գծով մշտական կոմիտեին՝ 6-րդ պարբերության համաձայն, ապա այդ անդամ պետությունը կարող է տվյալ կենդանիների առումով ձեռնարկել միջանկյալ պաշտպանական միջոցներ:
- Եթե անդամ պետությունը, սույն պարբերության համաձայն, ձեռնարկում է միջանկյալ պաշտպանական միջոցներ՝ երրորդ երկրի նկատմամբ, ապա նա դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին՝ 12 (5) հոդվածի համաձայն:
6. Գործը 10 աշխատանքային օրերի ընթացքում պետք է ուղարկվի Անասնաբուժության գծով մշտական կոմիտե 22-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ նպատակ ունենալով երկարաձգելու, փոփոխելու կամ չեղյալ համարելու 1-ին, 3-րդ եւ 5-րդ պարբերություններում սահմանված միջոցները:
7. 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 6-րդ պարբերությունների համաձայն երկարաձգելու, փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու մասին որոշումներն ընդունվում են 22-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:
8. Անհրաժեշտության դեպքում ընդունվում են սույն հոդվածի կիրարկման համար մանրամասն կանոններ՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

### **ԳԼՈՒԽ III**

#### **Տեսչական ստուգումները**

#### **Հոդված 19**

1. Հանձնաժողովի անասնաբույժ փորձագետները ազգային իրավասու մարմինների հետ համատեղ եւ սույն Հրահանգի պահանջների հավասարաչափ կիրառությունն ապահովելու չափով ստուգում են՝ համոզվելու համար, որ 6-րդ հոդվածի համաձայն հաստատված սահմանային հսկողության անցակետերը եւ 10-րդ հոդվածի համաձայն հաստատված

կարանտինի կենտրոնները համապատասխանաբար բավարարում են Ա Ե Բ հավելվածներում նշված չափանիշները:

2. Հանձնաժողովի անասնաբույժ փորձագետները կարող են իրավասու մարմինների հետ տեղում ստուգումներ կատարել:

3. Այն անդամ պետությունը, որի տարածքում կատարվել է տեսչական ստուգումը, պետք է Հանձնաժողովի անասնաբույժ փորձագետներին օժանդակություն տրամադրի, որի կարիքը նրանք կարող են ունենալ իրենց աշխատանքներն իրականացնելիս:

4. Հանձնաժողովն անդամ պետություններին տեղեկացնում է ստուգումների արդյունքի մասին:

5. Եթե Հանձնաժողովը կարծում է, որ ստուգումների արդյունքների համաձայն բավարար հիմք կա, ապա այն վերանայում է իրավիճակը Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակում: Այն կարող է ընդունել անհրաժեշտ որոշումներ՝ 22-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

6. Հանձնաժողովը դիտանցում է զարգացումները. նման զարգացումները հաշվի առնելով Ե 22-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն, այն կարող է փոփոխել կամ անվավեր ճանաչել 5-րդ պարբերության մեջ նշված որոշումները:

7. Անհրաժեշտության դեպքում ընդունվում են սույն հոդվածի կիրարկման համար մանրամասն կանոններ՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

## **Հոդված 20**

Եթե կենդանիների շուկայահանման կետում կատարված ստուգումների հիման վրա անդամ պետության իրավասու մարմինը կարծում է, որ սույն Հրահանգի պահանջները չեն պահպանվել մեկ այլ անդամ պետության սահմանային հսկողության կետում, ապա այդ մարմինն առանց հապաղման տեղեկացնում է այդ անդամ պետության իրավասու ազգային մարմնին:

Վերջինս ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Ե տեղեկացնում է առաջին անդամ պետության իրավասու մարմնին կատարված ստուգումների բնույթի, ընդունված որոշման Ե նման որոշումներ ընդունելու պատճառների մասին:

Եթե առաջին անգամ պետության իրավասու մարմինը կարծում է, որ միջոցներն անբավարար են, ապա այն տվյալ անգամ պետության իրավասու մարմնի հետ պետք է ուսումնասիրի այն եղանակները եւ միջոցները, որոնցով հնարավոր է իրավիճակը ուղղել, դրա համար, անհրաժեշտության դեպքում, այցելելով տվյալ անգամ պետություն:

Եթե առաջին ենթապարբերությունում նշված ստուգումների արդյունքում պարզվում են սույն Հրահանգի հետ կրկնվող անհամապատասխանությունները, ապա նպատակակետ հանդիսացող անգամ պետության իրավասու մարմինը պետք է տեղեկացնի դրա մասին Հանձնաժողովին եւ մյուս անգամ պետությունների իրավասու մարմիններին:

Հանձնաժողովը պետք է նպատակակետ հանդիսացող անգամ պետության իրավասու մարմնի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ տվյալ անգամ պետություն ուղարկի տեսչական ստուգում իրականացնող խումբ, որը պետք է գործի ազգային իրավասու մարմինների հետ համատեղ: Պայմանավորված Հանձնաժողովի կատարած բացահայտումներով՝ տվյալ անգամ պետությունը պետք է նպատակակետ հանդիսացող անգամ պետության խնդրանքով խստացնի տվյալ սահմանային հսկողության անցակետում կամ կարանտինի կենտրոնում ստուգումները:

Ելնելով Հանձնաժողովի կատարած բացահայտումներից՝ տվյալ անգամ պետությունը պետք է նպատակակետ հանդիսացող անգամ պետության խնդրանքով խստացնի տվյալ սահմանային հսկողության անցակետում կամ կարանտինի կենտրոնում ստուգումները:

Նպատակակետ հանդիսացող անգամ պետությունն իր կողմից կարող է խստացնել այդ վայրերից բերվող կենդանիների ստուգումները:

Համապատասխան երկու անգամ պետություններից մեկի խնդրանքով եւ 22-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան, եթե խախտումները հաստատվել են հինգերորդ ենթապարբերության մեջ նշված տեսչական ստուգման արդյունքում, պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ: Այդ միջոցները պետք է հաստատվեն կամ վերանայվեն հնարավորինս շուտ՝ միեւնույն ընթացակարգի համաձայն:

## Հոդված 21

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կազմում է երրորդ երկրներից բերվող եկող կենդանիների անասնաբուժական ստուգումներ անցկացնող աշխատակազմի փոխանակման ծրագիր:
2. Հանձնաժողովն ու անդամ պետությունները համակարգում են 1-ին պարբերության մեջ նշված ծրագրերը Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակում:
3. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ 2-րդ պարբերության մեջ նշված համակարգման արդյունքում իրականացվող ծրագրերի կատարման հնարավորություն ստեղծելու համար:
4. Յուրաքանչյուր տարի Անասնաբուժության գծով մշտական կոմիտեում ծրագրերի իրականացումը վերանայվում է անդամ պետությունների կողմից կազմած հաշվետվությունների հիման վրա:
5. Անդամ պետությունները հաշվի են առնում ձեռք բերված փորձառությունը՝ փոխանակման ծրագրերը կատարելագործելու եւ մշակելու համար:
6. Համայնքի կողմից կարող է կատարվել ֆինանսական ներդրում՝ փոխանակման ծրագրերի զարգացման արդյունավետությունը խթանելու համար: Նման ներդրման մանրամասն կանոններ եւ Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեից մասհանվող գումարի չափը սահմանվում է Խորհրդի «Անասնաբուժության ոլորտում ծախսերի մասին» 1990 թվականի հունիսի 26-ի 90/424/ԵՏՀ որոշման<sup>14</sup> մեջ:
7. Անհրաժեշտության դեպքում ընդունվում են 1-ին, 4-րդ եւ 5-րդ պարբերությունների կիրարկման մանրամասն կանոններ՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

## ԳԼՈՒԽ IV

### Ընդհանուր դրույթներ

---

<sup>14</sup> ՊՏ թիվ L 224, 18.08.1990թ., էջ 19: 91/133/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 66, 13.03.1991թ., էջ 18):



## **Հոդված 22**

Երբ հղում է կատարվում սույն հոդվածով սահմանված ընթացակարգին, պետք է գործողություն ձեռնարկվի՝ 89/662/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածի համաձայն:

## **Հոդված 23**

Երբ հղում է կատարվում սույն հոդվածով սահմանված ընթացակարգին, պետք է գործողություն ձեռնարկվի՝ 89/662/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածի համաձայն:

## **Հոդված 24**

Անհրաժեշտության դեպքում սույն Հրահանգի հավելվածները փոփոխվում են՝ 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

## **Հոդված 25**

Սույն Հրահանգը չի սահմանափակում մաքսային կանոններից բխող պարտավորությունները:

## **Հոդված 26**

1. 72/462/ԵՏՀ հրահանգի 12-րդ եւ 28-րդ հոդվածները հանվում են:

Սույն Հրահանգի 5-րդ եւ 6-րդ հոդվածներում սահմանված որոշումները կայացնելուց առաջ շարունակվում են կիրառվել 72/462/ԵՏՀ հրահանգի 12-րդ հոդվածի համաձայն ընդունված ակտերը:

2. 90/426/ԵՏՀ հրահանգի 20-րդ եւ 21-րդ հոդվածներն ու 90/539/ԵՏՀ հրահանգի 27-րդ եւ 29 (2) հոդվածները հանվում են:

## **Հոդված 27**

1. 89/662/ԵՏՀ հրահանգում կատարվում են հետեւյալ փոփոխությունները՝

ա) 19 (2) հոդվածում «1992 թվականի դեկտեմբերի 31» բառերը փոխարինել «1996 թվականի դեկտեմբերի 31» բառերով,

բ) 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 22

Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը պետք է գործողության մեջ դնեն 1992 թվականի հունիսի 1-ին»:

2. 90/425/ԵՏՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 7-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 7

2.1. Անդամ պետություններն ապահովում են, որ այն վայրերում իրականացված ստուգումների ժամանակ, որտեղից այն կենդանիները եւ արտադրանքը, որոնք բերվել են երրորդ երկրից եւ նշված են I հավելվածում, կարող են տեղափոխվել 90/675/ԵՏՀ հրահանգի I հավելվածում սահմանված տարածքներ, ինչպես օրինակ՝ երրորդ երկրի նավահանգիստներ, օդանավակայաններ եւ սահմանային հսկողության անցակետեր, ձեռնարկվեն հետևյալ միջոցները՝

ա) ստուգվեն կենդանիներին եւ արտադրանքին կից վկայագրերը կամ փաստաթղթերը.

բ) Համայնքի կենդանիները եւ արտադրանքը ենթակա լինեն 5-րդ հոդվածում սահմանված վերահսկման կանոններին.

գ) երրորդ երկրներից ստացված արտադրանքը ենթակա լինի 90/675/ԵՏՀ հրահանգում սահմանված կանոններին.

դ) երրորդ երկրներից բերված կենդանիները ենթակա լինեն 91/496/ԵՏՀ հրահանգում սահմանված կանոններին:

2. Այնուամենայնիվ, 1993 թվականի հունվարի 1-ից եւ շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ Համայնքի երկու աշխարհագրական վայրերի միջեւ կանոնավոր եւ ուղիղ կապ ապահովող տրանսպորտային միջոցներով տեղափոխվող բոլոր կենդանիները կամ արտադրանքը ենթակա են 5-րդ հոդվածում սահմանված վերահսկման կանոններին»;

բ) 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

## «Հոդված 23

2. Խորհուրդը նորից քննում է հետեւյալը՝ հիմնվելով Հանձնաժողովի հաշվետվության եւ դրանց կից հնարավոր առաջարկների վրա, որոնց մասին Խորհուրդը որոշում կկայացնի որակյալ մեծամասնությամբ՝

- նախքան 1993 թվականի հունվարի 1-ը՝ 10-րդ հոդվածի եւ 5 (2) (ա) հոդվածի դրույթները.
- նախքան 1996 թվականի հունվարի 1-ը՝ այլ դրույթներ»:

գ) 26-րդ հոդվածում՝

առաջին ենթապարբերությունում (ii) կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ii) սույն Հրահանգի մյուս դրույթները՝ 1992 թվականի հուլիսի 1-ին».

2-րդ ենթապարբերությունը հանել:

3. 90/675/ԵՀ հրահանգում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) 19-րդ հոդվածում 6-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«6. Գործը 10 աշխատանքային օրերի ընթացքում պետք է ուղարկվի Անասնաբուժության գծով մշտական կոմիտե 23-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ նպատակ ունենալով երկարաձգելու, փոփոխելու կամ չեղյալ համարելու 1-ին, 3-րդ եւ 5-րդ պարբերություններում սահմանված միջոցները: 23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգը կարող է նաեւ կիրառվել՝ անհրաժեշտ որոշումներ ընդունելու համար՝ այդ թվում՝ արտադրանքի միջհամայնքային տեղաշարժի եւ տարանցիկ փոխադրման մասով»:

բ) 32-րդ հոդվածում «1992 թվականի դեկտեմբերի 31» բառերը փոխարինել «1996 թվականի հուլիսի 1» բառերով:

## Հոդված 28

23-րդ հոդվածում սահմանված ընթացակարգով առաջնորդվելով՝ Հանձնաժողովը կարող է երեք տարվա ընթացքում ընդունել անցումային միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Հրահանգով սահմանված՝ հսկողության նոր պայմանավորվածություններին անցումը դյուրացնելու համար:

## Հոդված 29

Անդամ պետությունները ► ► , մասնավորապես՝ Ավստրիան եւ Ֆինլանդիան, ◄ ◄ կարող են կիրառել սույն Հրահանգի կիրարկման համար 90/424/ԵՏՀ հրահանգի 38-րդ հոդվածում սահմանված Համայնքի ֆինանսական օժանդակությունից, մասնավորապես, ստեղծելով անասնաբուժական ծառայություններ եւ սահմանային անցակետերի միջեւ տեղեկատվության փոխանակման ցանցեր:

## Հոդված 30

1. Անդամ պետությունները գործի մեջ են դնում օրենքներ, կանոնակարգեր եւ վարչական դրույթներ, որոնք անհրաժեշտ են հետեւյալ պահանջները բավարարելու համար՝

ա) 1991 թվականի դեկտեմբերի 1-ին՝ 6 (3) հոդվածի եւ 13-րդ, 18-րդ ու 21-րդ հոդվածների դրույթների պահանջները.

բ) սույն Հրահանգի մյուս դրույթները՝ 1992 թվականի հուլիսի 1-ին:

Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Սույն Կանոնակարգը կիրառելու համար ընդունվում են մանրամասն կանոններ, մասնավորապես՝ 8 (3) հոդվածի մասով եւ 12 (4) հոդվածում ►M3 ————— ◄ նշված համակարգն ուժի մեջ է դրվում 1992 թվականի հուլիսի 1-ին:

Եթե նախորդ ենթապարբերության մեջ նշված ամսաթիվը հնարավոր չէ պահպանել, ապա այդ ամսաթվին պետք է ձեռնարկվեն 28-րդ հոդվածում սահմանված անցումային միջոցները:

## Հոդված 31

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

## ՀԱՎԵԼՎԱԾ Ա

### **Սահմանային հսկողության անցակետերը հաստատելու ընդհանուր պայմանները**

Համայնքի կողմից հաստատվելու համար սահմանային հսկողության անցակետերը պետք է ունենան՝

- 1) առանձնացված մուտք կենդանի կենդանիների տեղափոխման համար, այնպես որ կենդանիներն անտեղի չսպասեն.
- 2) տարածք (որը պետք է հնարավոր լինի հեշտորեն մաքրել եւ ախտահանել)՝ տրանսպորտի տարբեր միջոցներ բեռնելու եւ բեռնաթափելու, տեսչական ստուգման, կերակրման, ծարավը հագեցնելու եւ կենդանիների բուժման համար, որը պետք է լինի բավականին մեծ, ունենա լուսավորություն եւ օդափոխություն՝ ստուգման ենթակա կենդանիների թվին համապատասխան.
- 3) սահմանային հսկողության անցակետում անցնող կենդանիների թվին համապատասխան՝ բավարար թվով անասնաբուժական եւ օժանդակ աշխատակազմ, որը պետք է հատուկ վերապատրաստում անցած լինի՝ հարակից փաստաթղթերը ստուգելու եւ սույն Հրահանգի 4-րդ, 5-րդ, 8-րդ եւ 9-րդ հոդվածներում նշված կլինիկական ստուգումներն անցկացնելու համար.
- 4) անասնաբուժական ստուգումներ անցկացնելու համար պատասխանատու աշխատակազմի օգտագործման համար բավարար մեծ տարածք, այդ թվում՝ հանդերձարաններ, լոգարաններ եւ զուգարաններ.
- 5) համայնքային կանոններով սահմանված ընթացիկ ստուգումների համար նմուշներ վերցնելու եւ դրանք մշակելու համար համապատասխան տարածք ու հարմարություններ.
- 6) մասնագիտացված լաբորատորիայից օգտվելու ծառայություններ, որոնց միջոցով հնարավոր է անցկացնել անցակետում վերցված նմուշների հատուկ փորձաստուգումներ.
- 7) մերձակա տեղակայված որեւէ կազմակերպության ծառայություններից օգտվելու հնարավորություն, որն ունի հարմարություններ եւ սարքավորում՝ կենդանիներին ապաստան տալու, կերակրելու, ծարավը հագեցնելու, բուժելու եւ, անհրաժեշտության դեպքում, սպանդի ենթարկելու համար.
- 8) եթե տեղափոխման ընթացքում նման անցակետերն օգտագործվում են որպես կանգառ կամ կենդանիների տարանցիկ փոխադրման կետեր՝ կենդանիների համար համապատասխան

հարմարություններ, անհրաժեշտության դեպքում, պատշաճորեն տրանսպորտային միջոցից իջեցնելու, ծարավը հագեցնելու, կերակրելու, ապաստան տալու, եւ համապատասխան բուժական օգնություն ցուցաբերելու կամ, անհրաժեշտության դեպքում, նրանց տեղում սպանդի ենթարկելու համար այնպես, որ կենդանիներն անտեղի տանջանքների չենթարկվեն.

9) համապատասխան սարքավորումներ սահմանային հսկողության անցակետերի եւ 90/425/ԵՏՀ հրահանգի 20-րդ հոդվածում նշված՝ անասնաբուժության գծով իրավասու մարմինների միջեւ տեղեկատվության արագ փոխանակման հնարավորություններ ապահովելու համար.

10) սարքավորումներ եւ հարմարություններ՝ մաքրման եւ ախտահանման համար:

## ՀԱՎԵԼՎԱԾ Բ

### Կարանտինի կենտրոնները հաստատելու ընդհանուր պայմանները

1. Կիրառվում են Ա հավելվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ եւ 10-րդ կետերի պահանջները:

2. Բացի դրանից՝ կարանտինի կենտրոնները պետք է՝

դրվեն իրավասու անասնաբույժի մշտական հսկողության եւ պատասխանատվության տակ.

ռեզակայված լինեն կենդանիների պահման հողամասերից կամ այլ վայրերից հեռու, որոնք կարող են վարակվել վարակիչ հիվանդություններով.

ունենան արդյունավետ վերահսկման համակարգ՝ կենդանիներին պատշաճ հսկողություն ապահովելու նպատակով:

---

( 14 ) ՊՏ թիվ L 378, 31.12.1982թ., էջ 58: Վերջին անգամ 90/134/ԵՏՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 76, 22.03.1990թ., էջ 23):